



Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2011թ. փետրվարին /վերլուծություն/

2011թ. փետրվարին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 14834 գործարքներ, որոնց քանակը 2010թ. փետրվարի համեմատ աճել է 10.6%-ով, իսկ 2011թ. հունվարի համեմատ՝ 54.0%-ով:

2011թ. փետրվարին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի և Երևան քաղաքի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2011թ. փետրվարին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2011թ. փետրվարին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 3538 օտարման գործարքների 78.3%-ը կազմել են առուվաճառքները, 21.1%-ը՝ նվիրատվությունները և 0.7%-ը՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 36.0%-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 38.5%-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանները:

2011թ. փետրվարին, 2011թ. հունվարի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակն աճել է 36.9%-ով, իսկ 2010թ. փետրվարի համեմատ՝ 6.6%-ով:

2011թ. փետրվարին Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 71.9%-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2011թ. փետրվարին, 2011թ. հունվարի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 2.0 անգամ, իսկ 2010թ. փետրվարի համեմատ՝ 19.4%-ով:

2011թ. փետրվարին Երևան քաղաքի վարչական շրջաններում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Վարչական շրջաններ	Միջին գները /դրամ/		
	փետրվար 2010թ.	փետրվար 2011թ.	հունվար 2011թ.
Կենտրոն	469200	442800	439100
Արաբկիր	370800	356100	352400
Քանաքեռ-Զեյթուն	281200	275200	273400
Նոր-Նորք	234400	228100	225800
Ավան	235700	231000	228900
Էրեբունի	246500	236300	234700
Ծենցավիթ	247300	237300	235500
Դավթաշեն	269000	261400	260100
Աջափնյակ	240500	222200	220400
Մալաթիա-Սեբաստիա	235000	221000	219400
Նուբարաշեն	143500	149000	149000
Միջինը Երևանում /բազի Նորք-մարաշից/	270300	260000	258100

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2011թ. փետրվարին բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները, 2011թ. հունվարի համեմատ, աճել են 0.7%-ով:

2011թ. փետրվարին մարզերում վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 331 բնակարաններ, որոնց քանակը, 2011թ. հունվարի համեմատ, աճել է 37.9%-ով, իսկ 2010թ. փետրվարին համեմատ՝ 7.8%-ով:

2011թ. փետրվարին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		փետրվար 2010թ.	փետրվար 2011թ.	հունվար 2011թ.
Արագածոտն	Աշտարակ	142000	134100	135000
	Ապարան	44800	46000	46000
	Թալին	52100	57500	57500
Արարատ	Արտաշատ	92600	93300	94200
	Մասիս	125400	131600	133000
	Վեդի	91700	94000	94900
	Արարատ	88300	84600	84700
Արմավիր	Վաղարշապատ	155500	150800	152700
	Արմավիր	120200	124800	125200
	Մեծամոր	80400	83600	84400
Գեղարքունիք	Սևան	92000	91000	91700
	Գավառ	45200	47700	47600
	Մարտունի	83200	86500	86500
	Վարդենիս	32300	31400	31600
	Ճամբարակ	19000	20600	20600

Լոռի	Վանաձոր	89400	89200	89700
	Ստեփանավան	57100	59800	59800
	Մախտակ	80300	83800	83800
	Ալավերդի	30500	33600	33700
	Տաշիր	35000	37000	37000
	Թումանյան	6100	6200	6200
	Շամլուղ	3400	3400	3400
	Ախթալա	14100	14400	14400
Կոտայք	Աբովյան	160600	145700	145200
	Նոր Հաճն	124000	130100	130100
	Բյուրեղավան	103000	105100	105100
	Եղվարդ	117400	109700	109700
	Հրազդան	62700	61200	61100
	Ծաղկաձոր	181500	177000	177000
	Չարենցավան	77100	76300	76200
Շիրակ	Գյումրի	120300	113500	114100
	Արթիկ	58500	63100	63100
	Մարալիկ	30600	30200	30200
Սյունիք	Գորիս	137400	139000	139000
	Կապան	97800	101500	101200
	Սիսիան	79500	84300	84100
	Մեղրի	57900	62000	62000
	Ագարակ	32800	34500	34500
	Քաջարան	61100	60400	60400
	Դաստակերտ	8000	8000	8000
Վայոց Ձոր	Վայք	71600	72000	72000
	Եղնգնաձոր	107800	110900	110900
	Ջերմուկ	112600	121000	121000
Տավուշ	Դիլիջան	96400	105700	105900
	Իջևան	138700	131500	131000
	Բերդ	42000	42300	42300
	Նոյեմբերյան	33400	34400	34400
	Այրում	24000	24200	24200

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2011թ. փետրվարին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները, 2011թ. հունվարի համեմատ, նվազել են 0.2 %-ով:

2011թ. փետրվարին հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 336 առուվաճառքի գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 84, մարզերում միասին վերցրած՝ 252: 2011թ. փետրվարին, 2011թ. հունվարի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 26.3%-ով, ընդ որում Երևանում՝ 31.3%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ 24.8%-ով: 2010թ. փետրվարին համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 9.4%-ով, ընդ որում Երևանում աճել է 13.5%-ով, իսկ մարզերում միասին վերցրած նվազել՝ 15.2%-ով:

2011թ. փետրվարին Երևան քաղաքի վարչական շրջաններում շինության 250.0քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինագված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Վարչական շրջաններ	Միջին գները /դրամ/		
	փետրվար 2010թ.	փետրվար 2011թ.	հունվար 2011թ.
Կենտրոն	485300	468800	469200
Արաբկիր	379400	378000	379200
Քանաքեռ Զեյթուն	288700	288900	289200
Նորք Մարաշ	284500	275500	275700

Ավան	238500	243000	243100
Էրեբունի	251700	244000	244300
Շենգավիթ	251500	249200	249800
Դավթաշեն	277500	274000	273500
Աջափնյակ	243800	239000	238100
Մալաթիա-Սեբաստիա	242300	233600	234600
Նուբարաշեն	147500	150900	150800
Միջինը Երևանում (բացի Նոր Նորքից)	281000	276800	277000

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2011թ. փետրվարին անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/, 2011թ. հունվարի համեմատ, նվազել են 0.1 %-ով:

2011թ. փետրվարին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		փետրվար 2010թ.	փետրվար 2011թ.	հունվար 2011թ.
Արագածոտն	Աշտարակ	146300	142600	143000
	Ապարան	47400	48700	48700
	Թալին	54300	57700	57700
Արարատ	Արտաշատ	100100	99500	100000
	Մասիս	126400	137500	138000
	Վեդի	94800	98300	99000
Արմավիր	Արարատ	93300	89100	89700
	Վաղարշապատ	166100	164300	165000
Արմավիր	Արմավիր	124700	131800	131700
	Գեղարքունիք	Սևան	94900	96200
Գավառ		47700	50500	50650
Մարտունի		86500	88800	89500
Վարդենիս		34500	34000	34000
Ճամբարակ		21200	23000	23100
Լոռի	Վանաձոր	96900	98000	97500
	Ստեփանավան	61200	63350	63500
	Սպիտակ	81500	86500	86500
	Ալավերդի	35000	36400	36450
	Տաշիր	38300	40300	40450
	Թումանյան	10400	10800	10800
	Շամլուղ	7500	7500	7500
	Ախթալա	18200	18300	18300
Կոտայք	Արովյան	165500	159200	160700
	Նոր Հաճն	134600	136500	136500
	Բյուրեղավան	109600	109400	109400
	Եղվարդ	128100	113700	115000
	Հրազդան	64500	65400	65600
	Ծաղկաձոր	305600	317400	317800
	Չարենցավան	80300	79500	80000
Շիրակ	Գյումրի	123400	122600	122500
	Արթիկ	60800	63900	63800
	Մարալիկ	31600	32200	32400

Սյունիք	Գորիս	143900	143200	143700
	Կապան	104400	107600	107400
	Սիսիան	84400	86750	86500
	Մեղրի	59900	64150	64200
	Ագարակ	35000	35700	35800
	Դաստակերտ	10500	10500	10500
Վայոց Ձոր	Վայք	73800	75000	75000
	Եղեգնաձոր	114600	113000	113000
	Ջերմուկ	116300	122800	122800
Տավուշ	Դիլիջան	100900	110600	110000
	Իջևան	141800	135600	135500
	Բերդ	43900	43950	44200
	Նոյեմբերյան	35100	35850	36000
	Այրում	26000	26100	26100

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2011թ. փետրվարին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/, 2011թ. հունվարի համեմատ, նվազել են 0.2%-ով:

Ընդհանուր առմամբ, 2011թ. փետրվարին հանրապետությունում օտարվել են 1273 միավոր /1045.73 հա/ հողեր, որից Երևանում՝ 44 միավոր /4.75 հա/: Օտարված հողերն ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 688 միավոր /989.36 հա/,
- բնակելի կառուցապատման հողեր՝ 429 միավոր /41.91 հա/, որից Երևանում՝ 39 միավոր /3.54 հա/,
- հասարակական կառուցապատման հողեր՝ 119 միավոր /7.42 հա/, որից Երևանում՝ 5 միավոր /1.21 հա/,
- արդյունաբերական օբյեկտների հողեր՝ 12 միավոր /4.28 հա/,
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հողեր՝ 3 միավոր /1.15 հա/,
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողեր՝ 22 միավոր /1.60 հա/:

2011թ. փետրվարին հանրապետությունում օտարված հողերից 1109 միավորի /971.00 հա/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից Երևանում՝ 33 միավոր /3.36 հա/, նվիրատվության գործարքներ՝ 153 միավորի /73.85 հա/, որից Երևանում՝ 9 միավոր /1.24 հա/ և փոխանակության գործարքներ՝ 11 միավորի /0.88 հա/, որից Երևանում՝ 2 միավոր /0.15 հա/:

Հանրապետությունում 2011թ. փետրվարին, 2010թ. փետրվարի համեմատ, հողերի առուվաճառքի գործարքների քանակն աճել է 0.7%-ով: Ընդ որում, գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 3.6%-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ աճել է 3.4%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ նվազել է 26.7%-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 574.92 հա, որից 568.39 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 22.7%-ը կամ 252 գործարքներ /95.01 հա/ հանդիսացել են պետական կամ համայնքային սեփականության հողեր, որից Երևանում՝ 4 գործարքներ /0.12 հա/, իսկ 76.6%-ը կամ 850 միավորը /875.86 հա/ հանդիսացել են մասնավոր սեփականության հողեր, որից Երևանում՝ 28 միավոր /3.24 հա/: 2011թ. փետրվարին հանրապետությունում գրանցվել է հողերի կառուցապատման իրավունքի վաճառքի 7 գործարք /0.12 հա/:

Ստորև ներկայացվում է 2011թ. փետրվարին պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի և Երևան քաղաքի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը և կառուցապատման իրավունքի վաճառքները.

	Պետական և համայնքային սնվականություն հանդիսացող								Մասնավոր սնվականություն հանդիսացող							
	Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի						բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	
Երևան	0	0.00	0	0.00	3	0.10	1	0.02	0	0.00	0	0.00	26	2.69	2	0.55
Արագածոտն	4	2.74	0	0.00	0	0.00	4	0.15	37	67.92	2	0.50	13	1.13	3	0.08
Արարատ	10	27.92	1	0.005	32	2.80	17	1.22	45	39.94	1	0.20	44	4.22	2	0.03
Արմավիր	6	9.24	1	0.02	1	0.02	5	0.07	94	559.15	1	1.11	56	5.28	1	0.01
Գեղարքունիք	12	13.83	2	0.54	5	0.43	7	0.03	30	16.85	0	0.00	24	2.92	2	0.07
Լոռի	3	0.90	0	0.00	3	0.05	3	0.03	159	49.07	0	0.00	24	3.08	1	0.06
Կոտայք	12	12.45	0	0.00	17	2.10	16	0.26	65	26.72	0	0.00	69	5.15	14	1.02
Շիրակ	1	6.58	1	0.19	14	0.39	10	0.19	31	26.54	0	0.00	10	1.10	1	0.03
Սյունիք	1	0.85	1	0.19	1	0.06	4	0.04	45	33.22	0	0.00	5	0.59	0	0.00
Վայոց Ձոր	4	4.70	0	0.00	2	0.24	3	2.42	13	21.35	0	0.00	2	0.18	4	0.18
Տավուշ	3	1.60	1	0.02	9	0.87	10	0.14	6	1.72	0	0.00	14	2.00	1	0.04
Ընդամենը	56	80.81	7	0.97	87	7.06	80	4.57	525	842.48	4	1.81	287	28.34	31	2.07

Ստորև ներկայացվում է 2011թ. փետրվարին պետական կամ համայնքային սնվականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունն ըստ մարզերի, Երևան քաղաքի և ըստ նպատակային նշանակության, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը.

	Ուղղակի վաճառք								Աճուրդ վաճառք									
	Ընդամենը		Արդյունաբ. օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողերի		Արդյունաբ. օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապ. հողերի								բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապ. հողերի	
Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	
Երևան	2	0.04	0	0.00	2	0.04	0	0.00	2	0.08	0	0.00	0	0.00	1	0.06	1	0.02
Արագածոտն	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	8	2.89	4	2.74	0	0.00	0	0.00	4	0.15
Արարատ	3	0.01	0	0.00	0	0.00	3	0.01	57	31.945	10	27.92	1	0.005	32	2.80	14	1.22
Արմավիր	2	0.04	1	0.02	1	0.02	0	0.00	11	9.31	6	9.24	0	0.00	0	0.00	5	0.07
Գեղարքունիք	1	0.004	0	0.00	0	0.00	1	0.004	25	14.83	12	13.83	2	0.54	5	0.43	6	0.03
Լոռի	1	0.01	0	0.00	0	0.00	1	0.01	6	0.78	1	0.71	0	0.00	3	0.05	2	0.02
Կոտայք	10	0.67	0	0.00	7	0.66	3	0.01	35	14.15	12	12.45	0	0.00	10	1.45	13	0.25
Շիրակ	13	0.44	1	0.19	7	0.16	5	0.09	13	6.91	1	6.58	0	0.00	7	0.23	5	0.10
Սյունիք	2	0.192	1	0.19	0	0.00	1	0.002	4	0.10	0	0.00	0	0.00	1	0.06	3	0.04
Վայոց Ձոր	2	0.202	0	0.00	1	0.20	1	0.002	7	7.16	4	4.70	0	0.00	1	0.04	2	2.42
Տավուշ	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	23	2.63	3	1.60	1	0.02	9	0.87	10	0.14
Ընդամենը	36	1.61	3	0.40	18	1.08	15	0.13	191	90.79	53	79.77	4	0.57	69	5.99	65	4.46

Հանրապետությունում 2011թ. փետրվարին արձանագրվել են նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 3 գործարքներ /1.04 հա ընդհանուր մակերեսով/:

Հանրապետությունում 2011թ. փետրվարին, 2010թ. փետրվարի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 7.7%-ով: Ընդ որում, Երևանում աճել է 2-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ նվազել 8.7%-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 45.4%-ով, բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի նկատմամբ աճել է 60.5%-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ աճել է 14.0%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ նվազել է 50.0%-ով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մամերնը /հա /	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մամերնը /հա /	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	3	2.72	19.4	99.1	72.5	28	55.31	365.0	12000.0	4385.5
Ապարան	1	0.02	408.0	408.0	408.0			86.5	2727.3	626.6
Թալին						7	6.75	93.6	5494.5	555.0
Ծաղկահովիտ						2	5.85	79.5	1000.0	212.5
Արարատի մարզ										
Արտաշատ						3	0.88	335.1	10833.3	2500.0
Մասիս	10	27.92	60.8	190.2	111.0	12	25.92	200.0	11904.8	2820.0
Վեդի						24	12.35	207.0	10795.1	1760.0
Արմավիրի մարզ										
Արմավիր	5	7.36	65.8	68.1	66.9	49	37.24	294.3	9090.0	1460.3
Բաղրամյան	1	1.88	67.8	67.8	67.8	16	504.78	90.6	2561.1	772.5
Վաղարշապատ						28	14.53	444.4	11764.7	2905.0
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						4	1.28	199.8	1875.0	370.5
Ճամբարակ								60.5	953.3	315.0
Մարտունի						21	5.85	51.1	2850.0	678.5
Սևան								52.2	2134.8	281.5
Վարդենիս	12	13.83	171.0	452.0	218.0	5	9.72	41.2	2575.1	408.3
Լոռու մարզ										
Ալավերդի						38	3.64	170.4	6424.2	828.3
Գուգարք	1	0.71	371.7	371.7	371.7	46	6.07	234.6	6065.9	914.3
Սպիտակ						8	0.84	250.0	5555.5	665.8
Ստեփանավան						6	4.10	90.6	1686.6	305.6
Տաշիր						16	6.65	45.3	1384.4	154.8
Կոտայքի մարզ										
Աբովյան	4	5.05	48.8	875.2	330.6	30	8.44	279.3	11942.7	4770.0
Եղվարդ	8	7.41	78.1	148.5	112.7	30	15.67	174.4	11971.8	3291.5
Հրազդան						5	2.61	130.5	10256.4	1910.0
Շիրակի մարզ										
Ախուրյան	1	6.58	282.2	282.2	282.2	21	15.84	252.0	1693.1	593.2
Ամասիա								40.9	261.0	137.7
Անի						7	7.65	110.6	546.9	346.7
Աշոցք						2	2.93	58.5	215.8	107.2
Արթիկ						1	0.12	79.4	1428.6	314.5
Սյունիքի մարզ										
Գորիս						8	6.95	92.6	1023.2	592.5
Կապան								120.0	841.6	310.0
Մեղրի						1	0.41	193.0	3000.0	660.0
Սիսիան						36	25.86	46.3	1977.4	395.5
Վայոց Ձորի մարզ										
Եղնգնաձոր	3	3.40	39.1	629.8	297.9	6	1.13	125.0	10000.0	1742.5
Վայք	1	1.30	69.1	69.1	69.1	7	20.22	58.8	1430.7	525.0
Տավուշի մարզ										
Բերդ						1	0.24	213.3	3783.8	622.3
Իջևան						1	0.26	267.5	9454.5	1200.0
Նոյնեբերդյան	3	1.60	340.0	902.0	538.3	4	1.22	46.7	7368.4	915.0

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծությունը կապված է հողերի տնտեսագործական և հողատնային և հողատնային:

Ստորև աղյուսակում ներկայացվում են հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000 .0քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ						10	8028.0	130.7	22200.0	2573.2
Ապարան						1	720.0	124.1	609.6	315.0
Թալին						2	2552.0	63.2	1454.8	152.2
Ծաղկահովիտ								60.0	214.3	81.3
Արարատի մարզ										
Արտաշատ						1	1000.0	173.9	7140.3	894.0
Մասիս	32	27960.0	666.0	1285.4	1138.2	30	27836.5	187.5	25000.0	1210.0
Վեդի						13	13348.0	126.1	5000.0	662.0
Արմավիրի մարզ										
Արմավիր						25	27356.0	131.6	9090.9	1215.0
Բաղրամյան								100.0	833.3	214.0
Վաղարշապատ						31	25486.0	197.4	26528.4	1530.0
Գեղարքունիքի մարզ										
Գավառ	2	2400.0	183.3	183.3	183.3	3	1920.0	186.6	1084.3	555.5
Ճամբարակ								71.3	2286.2	149.3
Մարտունի						18	24330.0	119.3	5000.0	275.0
Սևան	3	1865.2	465.8	1254.3	985.1	2	1380.0	240.0	3110.4	265.8
Վարդենիս						1	1617.0	72.5	987.2	150.0
Լոռու մարզ										
Այվերդի						3	3206.0	114.3	1388.9	215.2
Գուգարք								77.9	14083.3	915.0
Սպիտակ						19	26460.0	104.9	1348.3	200.0
Ստեփանավան	1	412.0	554.4	554.4	554.4	1	364.0	88.2	1666.7	171.5
Տաշիր	2	114.7	308.1	422.0	365.0	1	730.0	45.3	400.0	84.3
Կոտայքի մարզ										
Աբովյան	2	8200.0	646.0	1543.5	1094.8	28	21874.5	264.5	35353.5	1965.5
Եղվարդ	7	5600.0	4437.5	5062.5	4791.2	36	26596.0	173.6	27000.0	2837.4
Հրազդան	1	650.0	1961.5	1961.5	1961.5	5	3009.0	117.7	34848.5	1323.0
Շիրակի մարզ										
Ախուրյան	5	1022.4	1100.0	3111.4	2327.9	6	6219.6	113.6	18750.0	330.9
Ամասիա								45.3	274.7	71.0
Անի	1	500.0	88.0	88.0	88.0	2	2500.0	67.9	180.6	143.6
Աշոցք								40.8	144.0	60.0
Արթիկ	1	800.0	603.3	603.3	603.3	2	2254.0	111.8	5000.0	216.5
Սյունիքի մարզ										
Գորիս						4	4715.0	112.2	1700.0	358.5
Կապան								67.9	2638.9	272.0
Մեղրի						1	1200.0	68.5	632.9	170.0
Սիսիան	1	600.0	290.4	290.4	290.4			123.5	875.0	180.5

Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	1	400.0	762.5	762.5	762.5	2	1760.0	96.7	7659.6	497.2
Վայք								120.7	1448.3	192.3
Տավուշի մարզ										
Բերդ								100.0	100.0	100.0
Իջևան	9	8685.0	94.6	3000.0	2677.2	12	16577.0	500.0	500.0	500.0
Նոյնմբերյան						2	3450.0	197.5	197.5	197.5

2011թ. փետրվարին հանրապետությունում հողերի նկատմամբ գրանցվել է նախկինում անհատույց սեփականաշնորհման 2 գործարք 0.43 հա մակերեսով Տավուշի մարզում:

2011թ. փետրվարին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 693 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 4.7%-ը: Ընդ որում, վարձակալության գործարքների 80.7%-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից:

2011թ. փետրվարին, 2011թ. հունվարի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակն աճել է 44.1%-ով, իսկ 2010թ. փետրվարի համեմատ նվազել՝ 23.8%-ով:

2011թ. փետրվարին հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 50 բնակարանների, 27 անհատական բնակելի տների, 392 հասարակական, 55 արտադրական նշանակության օբյեկտների, 156 միավոր /195.66 հա/ հողերի, 13 ավտոտնակների վարձակալության գործարքներ: Հողերի կառուցապատման, անհատույց օգտագործման և սերվիտուտի իրավունքի պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2011թ. փետրվարին Երևան քաղաքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 4 վարձակալության գործարքների /այդ թվում 1 միավոր՝ 0.001 հա, կառուցապատման իրավունքով/ քանակը 2011թ. հունվարի համեմատ նվազել է 80.0%, իսկ 2010թ. փետրվարին համեմատ 81.0%-ով: 2011թ. փետրվարին հանրապետությունում վարձակալված 195.65 հա հողերից 4.87 հա վարձակալվել են Երևանում: Մարզերում վարձակալված 190.78 հա հողերից 7.80 հա կազմում են արդյունաբերական օբյեկտների, 0.30 հա՝ հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Սյունիքի մարզում՝ 78.82 հա, որից 69.44 հա գյուղատնտեսական նշանակության: 2011թ. փետրվարին հանրապետության մարզերում վարձակալվել են 177.67 հա գյուղատնտեսական նշանակության հողեր:

Ստորև ներկայացվում է 2011թ. փետրվարին հանրապետության մարզերում գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գործարքների տվյալների բաշխվածությունը.

Մարզի անվանումը	Վարձակալության գործարքների քանակները /միավոր/	Վարձակալված հողերի մակերեսները /հա/
Արագածոտն	6	4.33
Արարատ	4	52.07
Արմավիր	3	3.64
Գեղարքունիք	3	14.16
Լոռի	4	9.47
Կոտայք	12	3.16
Շիրակ	5	16.83
Սյունիք	45	69.44
Վայոց Ձոր	3	2.79
Տավուշ	2	1.78
Ընդամենը	87	177.67

2011թ. փետրվարին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 1865 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 12.6%-ը: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների

պետական գրանցումների քանակը, 2011թ. հունվարի համեմատ, աճել է 2.0 անգամ, իսկ 2010թ. փետրվարին համեմատ՝ 34.9%-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /44.9%/, առանձնատների /29.4%/, հասարակական նշանակության օբյեկտների /10.4%/ և հողերի /11.8%/ նկատմամբ: Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 816 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2011թ. հունվարի համեմատ, աճել է 2.0 անգամ, իսկ 2010թ. փետրվարին համեմատ՝ 24.6%-ով:

2011թ. փետրվարին հանրապետությունում գրավադրվել են 321.57 հա հողեր, որից 3.58 հա՝ Երևանում: Ընդ որում, գրավադրված հողերի 97.7%-ը կամ 314.20 հա գյուղատնտեսական նշանակության են, որոց 0.53 հա՝ Երևանում: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Արմավիրի մարզում՝ 124.92 հա, որից 124.47 հա՝ գյուղատնտեսական նշանակության:

2011թ. փետրվարին հանրապետությունում իրականացվել են հիփոթեքային գրավադրման 148 գործարքներ, որից 120-ը՝ Երևանում: Ընդ որում, հիփոթեքային գրավադրման գործարքների 83.1%-ն իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 15.5%-ն՝ անհատական բնակելի տների, 0.7-ական%-ը՝ հասարակական նշանակության օբյեկտների և այգետնակների նկատմամբ: 2011թ. հունվարի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակն աճել է 68.2%-ով, ընդ որում Երևանում՝ 84.6%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ 21.7%-ով: 2010թ. փետրվարին համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակն աճել է 38.3%-ով, ընդ որում Երևանում՝ 51.9%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ մնացել է անփոփոխ:

2011թ. փետրվարին հանրապետությունում ապապետականացման միջոցով մասնավորեցման գործարքներ չեն արձանագրվել:

2011թ. փետրվարին հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 2726 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը 2011թ. հունվարի համեմատ աճել է 2.2 անգամ, իսկ 2010թ. փետրվարին համեմատ՝ 35.0%-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 18.4%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /37.3%/:

77 կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե